

բարական լիցքին մէջ, սկսած մոլթերու հիմերուն վերեւի եզրի հորիզոնի ուղղութեան մինչեւ ներքեւի եզրի հորիզոնի ուղղութիւնը ներառեալ: Հիւսիսային աւանդատան մէջ խճանկարի մնացորդները դառնում են աւանդատան Ե. դարու սալայատակին ամբողջ մակերեսին տակ, մինչեւ մայր հողը:

Հետեւաբար խճանկարը շինուած է Դ. դարու կէսերէն մինչեւ Ե. դարու կէսերն եղած ժամանակամիջոցին: 480ական թրւականներուն դառնում է արդէն իսկ աւերուած վիճակի մէջ:

Էջմիածնի Մայր Տաճարի խճանկարը հանդիսացած է Հայաստանի քրիստոնէական առաջին շրջանի խճանկարային արուեստի առ աշխարհ մեզի յայտնի ամենահին օրինակը, եւ ընդհանրապէս քրիստոնէական արուեստի ամէնէն հին նմուշներէն մէկը:

(Էջմիածին, 1956, ք. 11-12, էջ 56)

ՊԵՂՈՒՄՆԵՐ ՍԵՒԱՆԻ ՇՈՒՐՁ

Երեւանի Ակադեմիայի պատմական թանգարանի հնագիտական արշաւախումբը Սեւանի լիճի կճաշէն գիւղին մօտ պեղումներ կատարած է՝ ջուրերէն ազատած երկրամասին վրայ. ամբողջ գերեզմանադաշտ մը երեւան եկած է, մօտ հարիւր դամբարաններով: Մեծ մասով քրոմէլեաներ են, իսկ մնացածը տարբեր մեծութեամբ գերեզմանաթումբեր: Վերջիններս կը պատկանին Քրիստոսէ առաջ երկրորդ հազարամեակի վերջին եւ առաջին հազարամեակի սկիզբին. իսկ քրոմէլեաները 800 թուականին Ն. Ք.: Արշաւախումբը դուրս հանած է արժէքաւոր նիւթեր: Երկու մեծ գերեզմանաթումբերու մէջ գրտնուած են փայտէ չորս սալեր, երկուքը քառանիւ, որոնցմէ մէկը ծածքով: Գրտնուած է նաեւ լաւ պահպանուած մանկական եռանիւ սալակ մը:

Յայտնաբերուած բազմաթիւ արժէքաւոր առարկաներու շարքին, յատուկ հե-

տաքըքրութիւն կը շարժեն դաշոյններու դարդարուն պատեաններ, ցարդ չտեսնուած ձեւերով. պղինձէ փոքրիկ երկանիւ սալակ մը, դանազան անասուններու՝ այծերու, եղներու եւ այլ թռչուններու արձանիկներ, ուլունքներ եւ արտակարգ նըրբութեամբ յօրինուած ուրիշ դարդեղէններ: Պեղումներու ատեն դառնում են նաեւ բազմաթիւ գէնքեր, նիզակներ, նետասլաքներ, կացիններ, կենցաղային կեանքի պատկանող խեցեղէն ամաններ, փայտէ ցածրիկ կլոր սեղաններ: Գերեզմանադաշտի կողքին կան քաղաքատիպ բնակավայրի մնացորդներ:

Կը համարուի որ քննութեան ենթակայ ժամանակաշրջանին՝ Սեւանայ լիճի շրջակայքը բնակած ըլլան տեղացի ցեղեր, որոնք նստակեաց կեանք կը վարէին Իշտիկունի երկրին մէջ:

(Սովետ. Հայաստան, 1956, ք. 11, էջ 47)

ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐԻ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քանի մը տարիէ ի վեր կը շարունակուին Երեւանի մօտ գտնուող ուրարտական հին ամրոցի՝ Կարմիր բլուրի պեղումները: Գտնուած նիւթերը միշտ աւելի նոր լուսարանութիւններ չկը բերեն ուրարտացիներու եւ բնիկ ժողովուրդներու կենցաղին եւ մշակոյթին մասին:

Յորենի շտեմարաններու, գինիի կարաններու եւ այլ մասաններու յայտնաբերումը ցոյց կու տայ երկրագործական մեծ զարգացում եւ մասնագիտութիւն: Գրտնուած խաղողի կորիզներու տարրալուծական քննութիւնը ցոյց տուած է որ ուրարտացիներուն ծանօթ էին խաղողի ամենալաւ տեսակները, որոնք այժմ ալ կ'աճին Հայաստանի մէջ: Մասնաւորապէս մէկուն մէջ գտնուած է ինձորի չիր. ուրիշ մասաններու մէջ՝ դարեջուր պատրաստելու յարմարութիւններ, եւ դարեջուրի մեծ տարողութիւն ունեցող դատարկ ամաններ:

Երկրագործութեան, այգեգործութեան եւ գինեգործութեան կողքին, զարգացած է նաեւ անասնաբուծութիւնը. գտնուած են անասուններու, մանր եւ խոշոր եղջերաւոր անասուններու մեծաքանակ ոսկրներ:

Արուեստի լաւագոյն նմուշներուն շարքին կարելի է դասել գտնուած քարէ տուրքի, որուն կափարիչին վրայ քանդակուած են վեհականներ, իսկ կողերուն վրայ՝ որսի տեսարաններ: Հեծեալ ու հետիոտն մարդիկ կան այնտեղ, նետ ու աղեղ իրենց ձեռքերուն մէջ: Տուրքի ունեւուն կը ներկայացնէ առիւծ մը՝ նստած վիճակի մէջ:

Հրաշալիք մըն է քարէ դաւաթը, որուն կափարիչին վրայ քանդակուած է կենաց ծառը, իսկ երկու կողմերը կ'երեւին թեւաւոր եւ կենդանադուլ մարդիկ:

Ոսկրէ սանտրի ամենահին օրինակը գտնուած է հոն, երկկողմանի մեծ ու փոքր ատամներով, վրան վեցթերթեան ծաղիկներ ու շրջանակներ: Նման զարդաքանդակներ ունին նաեւ դաշոյնի ոսկրէ կոթերը:

Պեղումներու ընթացքին գտնուած են 20 կնիք, որոնք կ'օգնեն լուսարանելու ուրարտական վրձնի, արուեստի եւ մշակոյթի կարգ մը հարցեր:

Յատուկ ուշադրութեան արժանի են Կարմիր բլուրի հիւսիս-արեւմտեան կողմի սենեակներուն մէջ գտնուած կաւէ երմէս սեպագիր տախտակները: Ատոնցմէ կու սեպագիր տախտակները եւ Ամէկը արդէն իսկ ուսումնասիրած են Ակադեմիայի Պատմական մասնաճիւղին գիտնականները. արձանագրութեան վրայ յիշատակուի որ Ագա ցեղը ուրարտակէ կան Ագու աստուծոյ տաճարին կը նուիրէ եղջերաւոր մեծ ու փոքր կենդանիներու հղթեր եւ անոնցմէ պատրաստուած համորթեր եւ անոնցմէ պատրաստուած համորթներ, ինչպէս նաեւ մայրի ծառի գեղունակներ, որոնք կ'օգտագործուէին տաճարներու եւ պալատներու շինութեան համար: Արձանագրութեան կարելի է եղ-

յաճախակի նուէրներ կը ստանային թաւաւորներէն կամ ցեղապետներէն. նուիրատուական բնոյթի արձանագրութիւնները կու դան վաւերացնելու այս եղելութիւնը:

Կաւէ տապալիր երկրորդ տախտակը տակաւին է կարգացուած. բայց իր վրայ կը կրէ ՌՈԱՍ ՌՈՒՍԱՅԻ ՈՐԳԻ մականորութիւնը, որով կը յայտնուի ուրարտացի թագաւորի մը անունը:

Հետզհետէ անշուշտ պիտի յայտնուի ամբողջ ուրարտական դիւան մը, որ մեծ լոյս պիտի սփռէ այդ շրջանի պատմութեան վրայ:

(Էջմիածին, 1956, ք. 4-5, էջ 10)

ԱՐԵՎԱԿԱՅԻՆ ԵԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ ԱՐԱՐԱՏՆԱՆ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ

Էջմիածնի շրջանին մէջ կառուցուելու հետ է արեւակի ջերմութեամբ աշխատող սովետական առաջին ելեկտրակայանը:

Կայանի մասնաւոր սարքաւորումներ սկսած են պատրաստել Երեւանի մետաղեայ կառուցումներու գործարանին մէջ:

Նոր ելեկտրակայանը պիտի բաղկանայ մետաղեայ բարձր աշտարակէ մը, եւ անոր շուրջը, արեւուն շարժման համապատասխան, ինքնաշարժ, պտուտող անդրադարձիչներէ, որոնք միասին պիտի կազմեն 20.000 քառակուսի մեզր ընդհանուր մակերեսով գոգաւոր հայելի, որուն միջոցով արեւուն ճառագայթները պիտի կեդրոնացուին աշտարակի բարձունքին, կիզակէտին մէջ դրուած հսկայ շողեկաթ-սային վրայ: Այս կեդրոնացած ճառագայթներու ջերմութեան բարձր աստիճանին տակ, կաթսային մէջ առաջացած շոգին պիտի կարենայ աշխատանքել 1.200 քիլովատ կարողութեան պտուտակ-անիւր, եւ ապա անցնելով ատորերիկեայ ջրաւանին մէջէն պիտի փերածուի տաք ջուրի:

Ստացուած ելեկտրական ոյժն ու տաք ջուրը պիտի օգտագործուին ջերմոցներու մէջ, անասնաբուծական մթերքներու մը-

չակման, դիւղատնտեսական աշխատանքներու մեքենայացման, ինչպէս նաեւ հասարակական կենցաղային պէտքերու: Ստորերկրեայ ջերմոցներէն տաք ջուր պիտի մատակարարուի նաեւ ձմրան եղանակին:

Ելեկտրակայանին կից պիտի շինուի նաեւ հսկայ սառնարան, որ սառոյց պիտի հայթայթէ ամրան եղանակին՝ դիւղատնտեսական մթերքներու պահպանման համար:

Միաժամանակ ակադեմիական դիտնականներու ղեկավարութեամբ՝ նախապատրաստական աշխատանքներ կը կատարուին Ալլըր լիճի ափին, արեղակնային զօրութեան օդադործովի նոր հնարաւորութիւններ գտնելու ուղղութեամբ:

(Էջմիածին, 1956, ք. 4-5, էջ 110)

ՋՈՒԹԱԿԱՆ ՄԱՆՈՒԿ ԲԱՐԻՔԵԱՆ

Ս. ՂԱԶԱՐԻ ՄԷՋ

Ապրիլ 14, Ծաղկապարտ: Քանի մը օրէի վեր Վենետիկ կը գտնուի ջութակահար Մանուկ Բարիքեան: Կու գայ Լոնտոնէն, հանդիստի կարճ շրջան մը անցընելու համար Երազային այս քաղաքին մէջ, բայց յատկապէս այցելելու համար դիւթական Ս. Ղազարը, եւ անոր հարուստ մատենադարանը:

Ծնած Կիպրոս, 16 տարեկանին կ'անցնի Անգլիա, ուր կը կատարելագործէ իր արուեստը: Հինգ տարեկանէն սկսած է նուագել. իր առաջին ուսուցիչն եղած է իր մօրեղբայրը. իսկ Լոնտոնի մէջ աշակերտած է հունգար համբաւուր ջութակահար՝ Լուդվիկ Փէշեպի, որ իր կարգին աշակերտն էր Հոսպայի: 1946ին կը շահի կարեւոր մրցանակ մը եւ այնուհետեւ երաժշտական աշխարհին ծանօթ դէմքերէն մէկը կը դառնայ Անգլիոյ մէջ: Ներկայիս նա առաջին ջութակահարն է Լոնտոնի Philharmonia նուագախումբին:

Այս ամառ Պատկէքի մէջ, Հոռմի Սաւաթա Ձէիլիա երաժշտանոցի նուագախումբին հետ պիտի ներկայացնէ Ս. Խաչատուրեանի ջութակի համերգը:

Տուած է բաղմամբիւ նուագահանդէսներ Անգլիոյ մէջ. ապա նաեւ արտասահման, Սթոքհոլմ, Սթրազպուրկ, ուր արժանացած է մեծամեծ գովեստներու:

Յաճախ կը նուագէ Լոնտոնայի ձայնասիրուէն եւ ունի պատրաստած երգապլանակներ:

Իր յայտագրին մէջ կը նշմարուին Պախ, Պէթհովըն, Մոցարթ, Պոսսմա, Տիտրաք,

Հինտեմիթ, Մէնտելսոն, Ջաչեովսքի, Շոսթաքովիչ, Խաչատուրեան:

Ձինք ներկայացնող յայտագիր մը ունիմ ձեռքիս տակ. առաջին իսկ բառերը կ'ընդգծեն իր ազնուական ծագումը. ԾԼՆԱԾ ՀԱՅ ԾՆՈՂՆԵՐԷ...:

Ուրեմն ջութակահար Մանուկ Բարիքեան անոնցմէ է՝ որ հայ արժէքները եւս ըրապցիւններու աչքին կը փայլեցնեն: Այս տեսակէտով ան դեռ աւելի մօտիկ է մեր սրտին ու մեր ալ պարծանքն է:

Իբր արտայայտութիւն Միլիթարեան հաստատութեան հանդէպ ունեցած իր բարձր գնահատանքին եւ սիրոյն, փափաքեցաւ նուագահանդէս մը տալ Միլիթարի յարկին տակ, նոյն ինքն Միլիթարի մեծ գրադարանի դահլիճին մէջ: Մեծ ճարտարութեամբ եւ արուեստագէտի բարձր արտայայտութեամբ նուագեց Պախի Sonata No. 1, in sol min. per violino: Հիանալի էր մանաւանդ երկրորդ մասը, ուր տեսանք իսկապէս Բարիքեանի մոգական սլացքը երաժշտական այդ դժուարին fugue-ի ընթացքին:

Մտերմական երկրորդ նուագահանդէս մըն ալ՝ Մուրատ-Ռափայէլեան վարժամանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ յաջորդ օրը, գլորոցի աշակերտներուն առջեւ, որոնք խանդավառօրէն ծափահարեցին մեր սիրելի արուեստագէտին ձրքերը:

Բայց այստեղ կ'ուզենք արձանագրել նաեւ մասնաշաղկուն մէկ նախասիրութիւնը ջութակահար Ս. Բարիքեանի:

Ան ջութակին չափ կը սիրէ հայկական հին տաղերութիւնները. իր ազնիւ Տիկնոջ հետ խոր մասնագէտներ կը ներկայանան մեր 1700եան տաղերական արուեստին. մանրամասնօրէն կը ճանչնան տաղերութեան հին դերերու տեսակներն ու անոնց պատմութիւնը. իրենք իսկ թանկազին հաւաքածոյ մը ունին նման հրատարակութիւններու եւ կը ջանան օրէ օր զայն ճշտեցնել: Անսահման խանդաղատանքով է որ դիտեցին, յափշտակութեամբ ու հիացումով երկարօրէն զննեցին, իրենց ձեռքերուն մէջ շոյեցին այն հին հրատարակութիւնները՝ որոնցմէ քիչ օրինակներ միայն կան աշխարհիս վրայ. այսպէս Մեղապարտ Յակոբի Աղթարքը 1512էն, Ժամադիրը եւ Սաղմոս 1567էն, որոնք մեր տաղերական առաջին պարծանքներն են՝ զած են. մասնագէտի աչքերով քննեցին Պուղայի, Մարտիլիոյ եւ Հոռմի հայկական հին տաղերութիւններու դերերու տեսակները, անոնց դեղագիտական հանգամանքը:

Մենք ի սրտէ յաջողութիւն կը մաղթենք սիրելի Մանուկ Բարիքեանին, թէ՛ իր հանրային ասպարէզին մէջ՝ իր ջութակի նորանոր յաղթանակներով, թէ՛ իր գրասենեակի հայագիտական աշխատանքներուն մէջ:

Յոյս ունինք կրկին զինք ծափահարելու մօտ ատենէն նաեւ իտալական բեմերու վրայ:

ԽՄԲ.

